



2019թ-ի ապրիլի 2-ին ՀՀ Չեղարքունիքի և Կոտայքի մարզպետարաններում «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան մարզպետարանի աշխատակազմի և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյանի միջև:

Հանդիպման նպատակն էր՝ ներկայացնել կազմակերպության կողմից նախատեսված « Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի բովանդակությունը և ծրագիրը մարզում իրականացնելու նպատակով ստորագրել համագործակցության հուշագիր:

Ներկայացվեցին ՀՀԱԿ ՀԿ գործունեության շրջանակները, ծրագրերի մանրամասները, ծրագրով նախատեսված գործողությունների շրջանակը:

Հանդիպումների արդյունքում համագործակցության հուշագրեր կնքվեցին:

«Թրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում կյանքի ղժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ: Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Գեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

